ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2012, 65, № 1-2, 55-56

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ ԲԱԴԱԼՅԱՆ
(ծննդյան 80-ամյակին)
(1931 – 2007)

2011 թ. դեկտեմբերին լրացավ վաստակաշատ երկրաֆիզիկոս, երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Վարդգեսի Բադալյանի ծննդյան 80 տարին:

Ս. Բադալյանը ծնվել է 1931թ. դեկտեմբերի 24-ին Սևան քաղաքում: Հետագայում ընտանիքը տեղափոխվել է Երևան, որտեղ նա 1949 թ. Ավարտել է 26 կոմիսարների անվան դպրոցը: Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի երկրաֆիզիկայի բաժինն ավարտելուց հետո ստացել է երկրաբան-երկրաֆիզիկոսի մասնագիտություն և 1954թ. գործուղվել աշխատանքի Ուրալի երկրաֆիզիկական արշավախումբ: Այստեղ անցկացրած 7 տարիները կարևոր դեր են ունեցել մասնագիտության մեջ նրա հետագա ձեռքբերումներում:

1961թ. ՀԽՍՀ ԳԱ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի հրավերով տեղափոխվել է Լենինական (այժմ՝ Գյումրի), որտեղ աշխատել է որպես գիտական քարտուղար (1961-64թթ.), հանքային երկրաֆիզիկայի բաժնի վարիչ (1966-89թթ.), գիտական գծով փոխտնօրեն (1972-73; 1978-81թթ.), տնօրեն (1973-78; 1981-89թթ.):

1972 թ. Ս. Բադալյանն իր գիտական հետազոտություններն ամփոփել է որպես թեկնածուական թեզ՝ «Ընդգետնյա էլեկտրահետախուզություն հարուցված բևեռացման մեթոդով» թեմայով՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: Շարունակելով գիտական ուսումնասիրությունները նախընտրած բնագավառում՝ 1988թ. նա պաշտպանել է «Ընդգետնյա երկրաֆիզիկական մեթոդների ֆիզիկա-երկրաբանական հիմունքները հանքային ֆորմացիաների հիմնական տիպերի ուսումնասիրման դեպքում (ՀԽՍՀ հանքավայրերի օրինակով)» թեմայով դոկտորական թեզը: Ս.Բադալյանը հեղինակ և համահեղինակ է ավելի քան 110 գիտա-

կան հոդվածների, 3 մենագրությունների: 1986 թ. տպագրել է Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի 25-ամյակին նվիրված հուշագիրքը:

Ստեփան Բադալյանը զգալի ավանդ ունի Հայաստանում ընդգետնյա երկրաֆիզիկայի զարգացման, մետաղային օգտակար հանածոների հետախուզման արդյունավետությունը բարձրացնելու գործում: Մեծ է նրա ներդրումը ՀՀ ԳԱԱ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտում գիտական նոր ուղղությունների զարգացման, գիտական նոր ստորաբաժանումների կազմակերպման, գրադարանային ֆոնդի հարստացման, ինստիտուտը երիտասարդ կադրերով համալրելու, գիտության և արտադրության կապի ամրապնդման գործում:

Ս.Բադալյանի տնօրինության օրոք՝ 1981-1989թթ., ինստիտուտի 35 գիտաշխատողներ դարձել են գիտությունների թեկնածու, իսկ 4-ը՝ դոկտոր: Նա ԽՍՀՄ հետախուզական երկրաֆիզիկայի Գիտական խորհրդի Երկրի էլեկտրականության և էլեկտրամագնիսական մեթոդների ուսումնասիրման բաժանմունքի անդամ էր: Երկար տարիներ դասավանդել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում: Պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով, Աշխատանքի արիության համար՝ մեդալով, ՀԽՍՀ ԳԱ Գովասանագրով և այլ պատվոգրերով:

Ս.Բադալյանն ուներ բազմաթիվ նախասիրություններ (մատենագիտություն, բանահավաքություն, հրապարակախոսություն): Սիրում էր գործընկերներին նվիրել իր չափածո ստեղծագործությունները, հատկապես նրանց ծննդյան օրերին: Երկար տարիներ ապրելով Գյումրիում՝ դարձել էր քաղաքի նվիրյալներից մեկը: Ցավոք, Ս.Բադալյանը չհասցրեց հրատարակված տեսնել իր «Շիրակի գիտնականների գործունեությունը կենսագրականներում» մատենագիտական ժողովածուն (Ե., 2009):

Ս.Վ. Բադալյանը մահացավ 2007 թվականին Գյումրիում:

Գործընկերները նրան հիշում են որպես բարձր կուլտուրայի տեր, հոգու բարությամբ օժտված և չափազանց պարկեշտ անձնավորության:

ՀՀ ԳԱԱ Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ Տեղեկագրի «Գիտություններ Երկրի մասին» հանդեսի խմբագրություն